Dr Michael Kambeck
Secretary General
Phone +32 484 75 28 25
Email michael.kambeck@eufoa.org

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բրյուսել, 30 նոյեմբեր 2012թ.

ԵՄ և Հայաստանը ձգտում են կնքել Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը 1 տարում

Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպությունը խորապես ողջունում է այն փառասիրական օրակարգը, որ այսօր քննարկվում է Հայաստանի և ԵՄ-ի միջև, ըստ որի մինչ հաջորդ տարվա նոյեմբերը Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության համաժողովը, նոր Ասոցացման համաձայնագրի՝ ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի (ԽՀԱԱԳՀ) բանակցությունները պետք է ավարտված լինեն:

Ավելին, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Բարոզոն իր՝ Երևանում կայանալիք Եվրոպական ժողովրդական կուսակցության արևելյան գործընկերության վեհաժողովի այցից առաջ տված հարցազրույցում նշեց, որ «2012թ-ին Հայաստան ԵՄ հարաբերությունները խորացել են: Լավ առաջընթաց է նկատվել Ասոցացման համաձայնագրի բանակցություններում, որը կապահովի Հայաստանի քաղաքական հարաբերություններն ու տնտեսական ինտեգրացիան ԵՄ: Այդ շրջանակներում, հուլիս ամսից սկսած բանակցությունների 3 փուլ է տեղի ունեցել ապագա Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ: Այս համաձայնագրի շնորհիվ 30% կավելանան Հայաստանից դեպի ԵՄ արտահանվող պոտենցիալ ապրանքների ծավալները: Մինչ 2013թ. նոյեմբերը Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության համաժողովը, հուսով ենք, որ մոտ կլինենք երկու խմբի բանակցությունների ավարտին»:[1]

«Հայաստանի համար այս զարգացումն առավել արդյունավետ վարչարարություն, բոլորի համար աճի հանարավորություններ ունեցող առավել դինամիկ շուկա և անգամ ժողովրդավարության և մարդու իրավունքների ասպարեզում եվրոպական ստանդարտներ ստեղծելու հնարավորություն է ընձեռում:» – մեկնաբանություններ, ‹‹Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ›› կազմակերպության գլխավոր քարտուղար Մայքլ Կամբեք: «Հաշվի առնելով դեպի արևելք և արևմուտք փակ սահմաններով աշխարհագրական դիրքը ԽՀԱԱԳՀ-ը թույլ է տալիս Հայաստանին ներսից զարգանալ: Հուսով ենք, որ փետրվարին կայանալիք նախագահական ընտրությունները հստակորեն կնախանշեն այս փոփոխությունների մեկնարկը, և հետո կառավարությունն ուժերը կուղի իրականացման գործընթացին՝ բանակցությունների հետ զուգահեռ: Հայաստանին սա պետք է, և այն հապաղելու ժամանակ չունի»:

Հետաքրքիր է ընթերցել Խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի (ԽՀՀ) եզրակացությունները, որոնք տեղեկություն են նշում Հայաստան-ԵՄ ներկայիս հարաբերությունների բազմաթիվ կողմերի վերաբերյալ:

---

[1] Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզույի հետ հարցազրույցը (Նոյեմբեր 28, 2012): http://www.mediamax.am/en/news/interviews/6368/

Ինչ վերաբերում է տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը ԽՀՀ եզրակացությունները նշում են Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի խաղաղ ճանապարհով լուծման անհրաժեշտությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի հիմնական սկզբունքների շրջանակներում. «Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը հիմնական սկզբունքների շրջանակներում լուծելու անհրաժեշտությունը, մի կարևոր քայլ է համընդգրկուն խաղաղության հասնելու և այդ խաղաղության հարատևականությունն ու կայունությունը պահպանելու համար; այնուհետև նշում է վերջնական որոշման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման կարևորությունն ապագայում՝ կարգավիճակի վերաբերյալ օրենքով սահմանվող կամքի ազատ դրսևորման վերաբերյալ», 17 պարբերություն:

Կոնտակտային գծի (ԿԳ) փխրուն իրավիճակի վերաբերյալ նշում է, «ընդգծում է վստահություն տածելու միջոցներ ստեղծելու արժևորությունը՝ ներառյալ դիպուկահարներին կոնտակտային գծից հեռացնելու պահանջն ըստ ԵԱՀԿ երաշխավորությունների», 18 պարբերություն:

Ավելին, փաստաթուղթը ընդգծում է ԵՄ-Հայաստան ընդհանրությունները Լեռնային Ղարաբաղում պալնավորված օդանավակայանի բացման վերաբերյալ, «ողջունում է կոնֆլիկտը խաղաղ ճանապարհով լուծմանը խթանող բոլոր հայտարարությունները և հիշեցնում է, որ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում պալնավորված օդանավակայանի բացումը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բազմիցս բոլոր կողմերից ստացել են հավաստիացումներ, որ համաձայն միջազգային իրավունքի իրենք մերժում են քաղաքացիական ինքնաթիռների նկատմամբ ցանկացած տեսակի սպառնալիք կամ ուժի օգտագործում և կխուսափեն խնդիրը քաղաքականացնելուց», 23 պարբերություն:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման վերաբերյալ փաստատուղթը կոչ է անում Թուրքիային կատարել իր պարտականությունները.

«Կշտամբում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման երկու համաձայնագրերի չվավերացման համար, որոնք ստորագրվել են 2009թ. Թյուրիխում. այդ համատեքստում բոլոր կողմերին և հատկապես Թուրքիային *կոչ է* անում իրենց պարտականությունները կատարել, *ընդգծում է* Թյուրիխի համաձայնագրերի վավերացման կարևորությունն ու ջանքերի ավելացումն առանց նախապայմանների հարաբերությունների նորմալացման խթանմանը, որին կարող է նախորդել միակողմանիորեն փակված սահմանների բացումը», 24 պարբերություն;

«*հավատում է*, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը և ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցությունները չպետք է կապել և *աջակցում է* տարածաշրջանային համագործակցություն խթանող բոլոր նախաձեռնությունները. այսպիսով ավարտին հասցնելով տարածաշրջանում որևէ երկրի տնտեսական մեկուսացմանն ուղղված քաղաքականությունը», 25 պարբերություն;

«*հիշատակում է* Եվրոպական խորհրդարանի 1987թ. ընդունած բանաձևը հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ, միևնույն ժամանակ *քաջալերելի է*, որ այս հարցը վերջին տարիներին հենց Թուրքիայում հայտնվել է ազատ և հանրային քննարկումների կիզակետում, որը կարող է նպաստել երկու հարևան ազգերի միջև հաշտեցմանը՝ ապահովելով նրանց խաղաղ համակեցությունն ու երկարատև համագործակցությունը», 26 պարբերություն:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպությունը սիրով կտրամադրի մեկնաբանություններ կամ անհրաժեշտ վերլուծություններ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով: Եվրոպա-Հայաստան խորհրդի անդամները նույնպես պատրաստակամ են մեկնաբանություններ տրամադրել: Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել մեր քարտուղարություն:

«Հայաստանի եվրոպացի բարեկամներ» կազմակերպության և Եվրոպա-Հայաստան խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք սեղմե՛ք այստեղ:

Լուսանկարները հասանելի են մեր կայքում, ինչպես նաև կտրամադրվեն ըստ պահանջի: Հեղինակային իրավունքի սահմաններում նկարների օգտագործումը թույլատրվում է: Օգտագործումն անվճար է, «Copyright: www.EuFoA.org» նշելը՝ պարտադիր: